

Ա. ՔՈՂԱՆՉՅԱՆ

ՌՈՒՄԻՆԱՀԱՅԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Զեռագրատունը (Մատենադարան) սումինահայերից վերջերս նվեր ստացավ 42 հայերին ձեռագրեր: Այդ արժեքավոր հայագածուն ուղարկվել էր Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական Բնկերությանը, Սովետական Միության հետ բարեկամական կապերի Ռումինական Բնկերության միջոցով:

Ռումինահայերի կատարած այս հայրենասիրական նախաձեռնությունը արժանի է բարձր գնահատանքի:

Ռումինիան հանդիսացել է Եվրոպայի հայկական ամենահին գտղթավայրերից մեկը: Նախքան Բագրատունիների հայկական թագավորության անկումը, բյուզանդական կայսրերի կողմից բավական թվով հայեր էին գաղթեցվում Ռումինիայի սահմանների մոտ: Բուլղարիայում 8—10-րդ դդ. ստեղծվել էր հայկական գաղութ, 10—11-րդ դդ. հունդարացի ժամանակագիրները արգելն հիշում են հայերի գոյությունը Ռումինիայի ներկա շրջաններից մեկում՝ Տրանսիլվանիայում (Արգել): 13-րդ դարում նույն վայրում հիշատակվում են «Հայկական հող» և «Հայկական վանք» անունները: Բայց Ռումինիայի հայկական գաղութը հատկապես բազմամարդ գարձավ Անիի անկումից հետո, սելջուկների և մոնղոլների արշավանքների շրջանում, երբ մեծ թվով զաղթականներ եկան ու հաստատվեցին այդ երկրում: Արդեն 1343 թվականից տեղեկություն ունենք Տրլմաչում (Տրանսիլվանիա) հայ հոգեոր առաջնորդի գոյության մասին: Ռումինացի ողատմիչները հիշում են, որ 1352 թվականին Ռումինիայի ներկա շրջաններից՝ Մոլդովայում գոյություն ուներ հայկական մի կարեօր գաղութ, որի անդամները քաղաքացի էին և սրբազնում էին իրենց լեզուն և կրոնը: 1350 թ. Մոլդովայի Բուտաշան և 1395 թ. նույն շրջանի Յաշ քաղաքում հայերը կառուցում են իրենց եկեղեցիները: Անկառած նույն գարում է առաջին անգամ կառուցվել նույն Սուչավայի հայոց երթեմնի առաջնորդանիստ Զամքայի վանքը:

1365 թվականին, երբ հիմնվեց Լիոնի հայկական թեմը, նրա իրավասությանը և նթարկվեցին նաև Ռումինիայում տպրող հայերը: Երեանի Պետ, Մատենադարանում պահվող № 1527 ձեռագրում հիշվում է Հովհաննես արքեպիսկոպոսը, որ 1379 թվականին Սիւ գնալով Կոնստանտին կաթողիկոսից ձեռնադրվել է արքեպիսկոպոս «ամենայն ըստոց և աւլուսաց աշխարհին», այսինքն առաջնորդ արքմանյան Ռումանիայի և Մոլդովայի հայերի:

Ալեքսանդրու, չել Բուն իշխանը (1400—1432) մեծ թվով հայեր է հրավիրում Մոլդովա և Նրանց մի շարք արտօնություններ է շնորհում: Դարձյալ նա է, որ 1401 թ. Սուչավայում հիմնադրում է առանձին հայկական թեմ: Թեև հետագայում էլ Ռումինիայի հայերը երրեմն ենթարկվում էին Լվովի հայկական թեմին, բայց ավելի ուշ արգեն վերջնականապես Սուչավան և հետո Յաշ քաղաքներն են գտնում ուսմինահայերի առաջնորդանիստ կենտրոնները: Գլխավորապես այդ է պատճառը, որ հետագայում, երբ Նիկոլ Թորոսովիչը լեհական արքունիքի օգնությամբ սկսեց արևմտյան Ռումանիայի հայերի բոնի կաթոլիկացման գործը, Ռումինիայի հայերը, լինելով Լվովից անկախ, կարողացան հետ մզել կաթոլիկական ուսնագությունները և երկար դարեր պահպանել իրենց լեզուն ու հայրենի սովորությունները:

1418 թվականին, դարձյալ Ալեքսանդրու չել Բուն իշխանի օրոք 3000 հայ ընտանիք ևս գտղթեց Մոլդովայի մի շարք կարեոր քաղաքները, ինչպես Սուչավա, Բուտոչան, Յաշ, Արքերման, Սիրետ, Բուժան, Վասլույ և այլն: Մոլդովայի և Վարտիսիայի հետագա իշխանները ևս հայերին ավեցին որոշ արտօնություններ: Հայերը ունեցան իրենց եկեղեցական գատառանական ժողովը, առանձին քաղաքապետը, արհեստավորները՝ իրենց համարությունը, Երիտասարդները՝ իրենց շկտրիճվորաց եղբայրությունները և այլն: 15-րդ դարում միայն Սուչավան 700 հայ ընտանիք ուներ: Այնուղ միջնադարում կառուցված շուրջ 10 հայկական հուշարձաններից 6-ը մինչեւ օրս դեռ կանգուն վիճակում են:

Հայաստանում և այլ հայաշատ վայրերում ծայր առնող քաղաքական անրարկենագաստ պայմանները գաղթականության նոր քարավաններ էին ճամփա հանում դեպի հյուրընկալ Ռումինիայի ավելիքը: Այսպես, օրինակ՝ 1453 թվականին, Կ. Պոլսի անկումից հետո, Պերայից մի նոր գաղթականություն է անցնում Մոլդովա և Վալախիա, 1475 թվականին Դրիմն էլ ընկալ թյուրքերի ձեռքը, հայերից շատերը ստիպվեցին թողնել իրենց երբեմնի բազմամարդ գաղթավայրը և անցնել Մոլդովա: 1598 և 1606 թվականներին ջելալիների ասպատակությունների շրջանում, այս անգամ Արեմբայան Հայաստանից մեծ թվով փախստականներ ազատատան գտան ուղմինական երկրում: 1600—1602 թթ. Եվգոլիխայի հայերը, իսկ 1605 թ Շահ-Արքասի կողմից կաղմանկերպված բոնագուղթի շրջանում ավելի մեծ թվով հայեր՝ անցնում են ուղմինական երկրները և միանում իրենց աղքակիցներին: 17, 18, 19 դարերում նոր գաղթեր են անդի ունենում թյուրքիայից և Բուլղարիայից: 1895—1896, 1908, 1916 և 1922 թթ. թյուրքական հայաջինջ քաղաքականությունը հայ բազմահազար աշխատավորներ է սփռում դարձյալ դեպի ուղմինական ավելիքը: Ռումինիայի Տրանսիլվանիա շրջանի հայ գաղութը հատկապես բազմամարդ զարձակ 17-րդ դ., երբ մեծ թվով հայեր Մոլդովայից գաղթեցին այնուղ և հիմնեցին 2 հայաքաղաքներ, Գեուլան՝ որ օտարների կողմից հայտնի էր իր Արմեներշտատ (Հայտքաղաք) անունով և Գումբրը (Եղիսարեթուպոլիս): Այդ քաղաքների հայերը ունեին իրենց հայկական դատարանը և ստացել էին ազատ քաղաքի իրավունք: Միայն Գեուլայում բնակություն էին հաստատել, բայց ումանց, շուրջ 3000 հայ ընտանիք:

Երկար դարերի պատճություն ունեն հայերի և ուղմինների քաղա-

քական, տնտեսական և կուլտուրական կապերը: Հայերը գարեր շարունակ սումինական հայրենասեր զորքերի հետ կռղք-կռղքի պայքարել են թյուրքական զավթիչների գեմ:

Մեծ է եղել հայերի զերը երկրի առետրի ու քաղաքների զարգացման գործում: Հայերը կարևոր զեր էին կատարում միջազգային այն առետրական ճանապարհի վրա, որի հանգուցակետերը հանգիսանում էին սումինական քաղաքները: այդ ճանապարհի մի ծայրը գնում էր մինչև Համբուրգ-Բրւմեն, իսկ մյուսը՝ հասնում մինչև Կոստանդնուպոլիս:

Շատ խորն են հայ և սումինական ժողովուրգների կուլտուրական փոխադարձ կազմերը: Սումինական ճարտարապետական հոչակավոր հուշարձաններից՝ Արձեշի վանքը, Յաշի Տրեյ Երարհը, Դեալի եկեղեցին և այլն, սումինացի գիտնականների վկայությամբ, կրում են իրենց վրա, հայկական ճարտարապետության ազգեցության որոշ հետքեր, իսկ մոլորդական և սուստական ոճ ունեն Սումինիայի հայկական եկեղեցիներից շատերը: Սումինացի գիտնականներից ոմանք հայկական արվեստի որոշ ազգեցություն են նշմարում սումինական մանրանկարչության և փայտեղենիրերի վրա կատարված փորագրությունների վրա: Իսկ որոշ հայերեն գրքերի կազմեր կրում են սումինական ոճ: Դեռ շատ վաղ ժամանակներում սումիներեն է թարգմանվել Արգարի զրուցը, «Գրիգոր Լուսավորչի», Մեծ Հայաստանի եպիսկոպոսի կենսագրությունը, ինչպես նաև Հոբիփոմյանց կույսերի վարքագրությունը: իսկ անցյալ դարի սկզբին Յաշում մոլովական լեզվից հայերեն է թարգմանվել «Գիրք ճակատամարտությանը», որից մի շարք ձեռագիր օրինակներ են սպահպանվում Երևանի և Վիեննայի Մատենադարաններում: Սումինական հին սպարեզանակներից մեկը կոչվում է «Արմենեատակա» (հայկական), որը բատ սումինացի գիտնականների կարծիքի, մնացել է հայ հին գաղթականներից:

Դարերի ընթացքում մեծ թվով հայերեն ձեռագրեր են պահպանվել ու գրվել նաև Սումինիայում: Ներկայումս Սումինիայում հայերեն ձեռագրեր են սպահպանվում Բուխարեստի Սումինական Ակադեմիայում և հայ թեմի առաջնորդարանում, ինչպես նաև Կլուժ քաղաքի համալսարանում, Գեուլայում, Գումբրինում, Գեորգենում, Ֆրումասայում և այլ քաղաքներում: Սումինիայում ընդօրինակված հայերեն ձեռագրեր են սպահպանվում Երևանի, Վենետիկի, Վիեննայի, Մունեյի (Մունեյը — Բուլղարիա), Բուգալիշտի և այլ քաղաքների մատենադարաններում:

Մումինայում պահպող և այնակեղ ընդօրինակված ձեռագրերի թիվը անցյալում շատ մեծ է եղել, բայց նրանցից շատերը 1551, 1564, 1595, 1671 և 1769 թվականներին տեղի ունեցած արհավիրքներին զոհ են գնացել: Միջնադարյան տաղասաց Մինաս Թոխաթեցին նկարագրում է, թե ինչպես 1551 թվականին ոչնչացվել են հայերեն ձեռագրերը Մոլովայի հայաշատ յոթ քաղաքներում:

Ներկայումս հայ և սումինական կապերը հասել են բոլորովին նոր ու իր նախընթացը չունեցող տատիճանի: Եթե անցյալում այդ կապերը եղել են սոսկ տեղական հայ գաղութի և սումինական ժողովրդի ու պետության միջին տեղի ունեցող փոխարարերություններ, ասկա այժմ, պատմության մեջ առաջին անգամ լինելով, զրանք վեր են ածվել նաև երկու իրավահամապատը պետությունների՝ Սովետական Հայաստանի և Սումինական ժողո-

վրդական Ռեսպուբլիկայի միջև ծնունդ առած ջերմ հարաբերութունների Ռումինիայում ռումիններեն լեզվով լույս են տեսնում սովետահայ ականավոր գրողների գործերը։ Իսկ Սովետական Հայաստանում լայն ընթերցող հասարակությանը մատչելի են գառնում ռումինական գեմոլիրատական գրականության գլխավոր ներկայացուցիչների երկասիրությունները։

Եվ ահա ռումինահայերի գարավոր ժառանգության մի կարևոր մասը կազմող 42 հայերեն ձեռագրերի հավաքածուն, ռումինահայերի նվիրատվությամբ՝ վերջերս մուծվեց Երևանի Պետական Մատենադարանի ձեռագրերի հարուստ գանձարանը։

Ռումինահայերի կողմից ուղարկված հայերեն ձեռագրերը ժամանակի ընթացքում հավաքվել են Բուլղարիայի և Մոլդովայի երրեմնի հայաշատ մի քանի քաղաքներից՝ Մուշավայից, Յաշից, Բոտոշանից, Ռոմանից, Ֆոկշանից և այլն։ Արանք Բուլղարիանի հայերական եկեղեցու վերնահարկում գտնված ու մի շարք այլ անձերի կողմից նվիրված ձեռագրերի հետ պահպանվել են 1927 թվականին հիմնադրված Բուլղարիանի «Ռումինահայ կենտրոնական Մատենադարանում» և ապա Բուլղարիանի նորակառույց «Հայ Մշակույթի Տան» ձեռագրական բաժնում։ Այստեղ ձեռագրերի թիվը վերջերս հասել էր 150-ի։ Ուղարկված 42 ձեռագրերը Բուլղարիանում հավաքված հայերեն ձեռագրերից ամենահնագույններն են։

Ռումինահայերի կողմից նվիրված ձեռագրերի շարքում առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում 1265 թվականին Կիլիկիայի Մաշկեռի վանքում գրված ավետարանը, որի գրիչը, այսինքն ընդօրինակողն է Կիրակոսը, իսկ գրքի կազմողն է Առաքել Հնապանդենցը։ Հիշատակարանում հիշվում է հայոց Հեթում Ա. թագավորը։ Այս ձեռագիրը երկար ժամանակ պահպանվել է Ռոման քաղաքում։ Անհրաժեշտ է այստեղ հիշել, որ Երևանի Պետ. Մատենադարանում պահպանված՝ Մաշկեռում գրված ձեռագրերից հնագույնն է այս ձեռագիրը, եթե չհաշվենք 1258 թ. Կիլիկիայում գրված մի այլ ավետարան, որի գրիչն ու կազմողը գործյալ վերոհիշյալ անձերն են։

Կարենը նշանակություն ունի երկար ժամանակ Բուտոշանում պահպանված 14-րդ դարի մի ավետարանն, որի հիշատակարանը գժրախտաբար ընկել է։ Բնչական երեսում է նրա նկարների ոճից, սույն ձեռագիրը նկարազարդել է Կիլիկիան Հայաստանի հոչակավոր նկարիչ Սարգիս Պիծակը։ Զեռագրում կան 4 կիսատորան և 4 ավետարանիչների նկարներ սոկեզույն ֆոնի վրա։ Պետ. Մատենադարանում պահպանվող Ս. Պիծակի կազմից նկարազարդված ձեռագրերի թիվը սույն ձեռագրով հասնում է 10-ի։ Կարենը նշանակություն ունի նաև այն հանդամանքը, որ սույն ձեռագրի սկզբում գտնվող պահպանակը, իր հնագրական ավյալներով, ներկայացնում է 10-րդ դարում բուն մեսրոպյան երկաթագրով գրված Ավետարանի մագաղաթյան մի թերթ։

Զեռագրերի պատմության տեսակետից հետաքրքրական է 1313 թվականին Երևանադեմում գրված ձաշոց գրքի կենսագրությունը, որը մեզ հայտնի է գտնում ձեռագրում պահպանվող բազմաթիվ հիշատակագրություններից։ Զեռագիրն ընդօրինակել է Կարապետ քահանան։ Գրիկելոց 20 տարի անց՝ 1333 թվականին, ստացել է Առեր տիկինը, որն այն նվիրել է Երևանադեմի Ս. Հակոբի վանքին։ 1371 թվականին ձեռագիրը վաճառվում է գրչի որդու կողմից, իսկ 1390 թ. Դերջանում ասպատակազների կողմից գերի է տարվում և հետագայում, փրկադին վճարելով, հայերը

ազատում են գերությունից: 1687 թ. այս ձեռագիրը վերակաղմանում է Թումինիայի ձուրճով (Գևորգեն) քաղաքում՝ Ստեփաննաս գպիր Կամենիցացու կողմից: 1700 թ. ձեռագրում հիշատակություն է թողել Երևանցի ոմն Ավագ: Իսկ 1837 թ. արգեն ձեռագիրը գտնվում է Սուչավայում: Ձեռագրում հիշվում է Սուչավայի հայտնի հայ ուսուցիչ Աստվածատուր Ռոմաշկանը: Մի դար Սուչավա մնալուց հետո, ձեռագիրը փոխադրվում է Բուխարեստի Հայկական Մատենադարանը, իսկ այժմ այն իր մշտական տեղն ունի Երևանի Պետ. Մատենադարանում և մատչելի է դարձել ուսումնասիրող գիտնականների համար:

Հայ միջնադարյան սոցիալ-իրավաբանական անցյալն ուսումնասիրեցւ տեսակետից արժեքավոր է 1621 թ. Կամենիցում գրված Կանոնագիրքը, որը սրատկանում է Պետ. Մատենադարանի № 6409 Կանոնագրքի խմբին: Մի այլ ձեռագիր, որը ձեռք է բերվել Բուխարեստում 1948 թվականին՝ բնգօրինակվել է 17-րդ դարում: Նա գարձյալ Կանոնագիրք է և պատկանում է Գևորգ Լամբրոնացու, Գրիգոր Կեսարացու և Աղարիս Սասնեցու կողմից խմբագրված կանոնագրքերի խմբին: Ձեռագրի երկրորդ մասում գտնվում է հայ միջնադարյան նշանավոր գիտնական Մխիթար Գոշի (12-րդ դ.) Դատաստանագիրքը՝ հողվածների այլ գասավորությամբ: Սույն ձեռագրում երեսում է նաև հայ պատմիչ Արքահամ Կրետացու (17—18-րդ դդ.) 1708 թվականն ունեցող կնիքը, որը ցույց է տալիս, թե ձեռագիրը մի ժամանակ նրան է պատկանել:

Հետաքրքրական մի ժողովածու է 1613—1615 թթ. Լվովում Հաճի ետք ժամանացու կողմից գրված ձեռագիրը: Նրա մեծ մասը ընդգրկում է 14—15-րդ դր. ապրած հայ նշանավոր գիտնական Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատությունից հատվածներ: Ձեռագրում կան նաև հայ միջնադարյան անվանի հեղինակներ՝ Վարդան Ալգեկցու (13-րդ դ.), Հովհաննես Երզնկացու (13-րդ դ.) Խրտաները, Հակոբ Դրիմեցու (15-րդ դ.) տոմարագիտական մի աշխատությունը և այլն:

Քարոզգրքերի շարքից պետք է հիշել Կ. Պոլսի պատրիարք Հակոբ Նալյանի 1758 թվականին իր իսկ ձեռքով գրված քարոզների ժողովածուն:

Սույնձնապես կարեոր նշանակություն ունի Թումինիայի Տրանսիլվանիա (Արգեալ) շրջանի հայերի ներկայումս անհետացած բարբառը ուսումնասիրելու տեսակետից՝ 1819—1830 թթ. Թումինիայի Եղիսարեթուպոլիս (ներկայումս՝ Դումբրելին) քաղաքում գրված քարոզների 5 հատումնաց ժողովածուն, որը շարադրել է Հովհաննես Գալուեպավյանը: Նրա քարոզները կարեոր են նաև Տրանսիլվանիայի հայերի պատմությունը ուսումնասիրելու տեսակետից: Հատկապես արժեքավոր է Գալուեպովյանի 1823 թ. գրած հատորը, որը կարեոր լույս է սփռում տեղի հայերի իրավաբանական մաքի պատմության վրա: Այսուղ հիշատակվում են գատավորների և ժողովրդի ունեցած իրավունքների մասին: Գիրքը գրված է հարց ու պատասխանի ձևով: Սույն քարոզների ժողովածուն հանդիպում ենք ուռմիներեն մի շարք բառերի (կրըպիտ, ըրինդ, կալաճի, կլոսա, սիկուր, բունդտում և այլն), որոնք գործ էին ածվում Տրանսիլվանիայի հայերի խոռակցական լեզվում: Հետաքրքրական են նաև Գալուեպովյանի կողմից զանազան անձերի մահվան կապակցությամբ արտասանած դամրանականները, որոնք գրի է ոռել իր ժողովածուն: Քաղաքի նոտարի

մահվան առթիվ նա գրում է. «...Ինչ ձայն է առ. ձայն մեռելի, սքու ձայնը, ազգիդ պարծանքը քաղքին գրիչը Աղայ Լուգաչ Զիդիյեան...» «ընկաւ դրբիչը ձերվրնուդ, ու սքու ելլելովը հայ հասարակութեանը մարմնուն մէջէն, մէկ անդամ մը ընկաւ դուս զորոյ ըլլալուն պիտիկանութիւնը ընկաւ աղէկ, չիլալուն զենը պի ճանչէցնու...» (Ձեռ. № 9520, էջ 37թ—38ա): Վերջում առաջարկում է իր սիրելիներին թաղել նրա անշունչ մարմինը. «...Լուգաչը նոտարը էլէք քշել 33 տարեկան գրբելուն էտէվանց դըրաւ զվերջին բունդումբր...» (էջ 41թ): Կան նուև լատիներեն մէջրերումներ և հունգարերեն մի քանի քարոզներ:

Գապտեղովյանի մի այլ քարոզդիրքը, գրված 1824 թվականին, ներկայումս գտնվում է Տրանսիլվանիայի Ֆրումոասա գյուղաքաղաքի հայ կաթոլիկ եկեղեցում:

Ստացված ձեռագրերում գտնվում են նաև երկու բժշկարաններ, որոնք կազմում են մի աշխատության երկու հատորները: Աշխատությունը գրված է 19-րդ դարի սկզբին հայ հեղինակի կողմից, որի անունը, դժբախտաբար, չի պահպանվել: Այդ աշխատությունը հավանաբար գրված է Կ. Պոլում (հաճախ հեղինակը հիշում է Կ. Պոլիս, Ատաղաղար, Նիկոմիդիա տեղանունները): Հեղինակը հիշատակում է իր ուսուցչին «թիֆլիզցի Յօհաննէս ճարտար բժիշկին», որ 130 տարի էր ապրել և ուներ նոր ատամունք 5—6: Հեղինակը իր գրքում բացի հայերենից օգտագործել է նաև լատիներեն, իտալերեն, արաբերեն, պարսկերեն բժշկական տերմիններ: Ձեռագրում կան մարդակազմության, առողջապահության, դիետիկայի, մանկարուժության, սեռային դաստիարակության, վերաբուժության և այլ հարցերի շուրջ բազմաթիվ հետաքրքրական նյութեր: Երկրորդ հատորը մեծ մասամբ նվիրված է գեղագործությանը և ունի առավելագեստ գործնական նշանակություն: Նախ խոսվում է հիվանդությունների ախտարանական նշանների և ազա գեղի գործածման կերպի մասին: Հեղինակը իր աշխատությունը գրելիս օգտագործել է Արխատուելի, Հիպոկրատեսի, Ավիցեննայի, Գալիանոսի և ուրիշների առույթները և կամ փորձը: Հեղինակը օգտագել է նաև հայ բժիշկների փորձից: Բացի իր ուսուցչից նա հիշում է նաև Հնդկաստանում բազմաթիվ տարիներ բժշկությամբ զրազված Կարբեցի բժիշկ Գավիթ Մկրտչյանին:

Ռումինահայերի կողմից նվեր ուղարկված հայերեն ձեռագրերի սույն հավաքածուն արժեքավոր նյութեր է բովանդակում հատկապես հայ գաղութների պատմության համար: Կան նյութեր, որոնք վերաբերում են Ռումինիայի, Ռւկաբինայի, Լեհաստանի և այլ հայ գաղութների անցյալի պատմությանը:

Ձեռագրերից շատերը գրված լինելով տարրեր երկրների մի շարք քաղաքներում, որոշ նյութեր են պարունակում նաև Ռուսաստանի, Ռումինիայի, Ռւկաբինայի, Լեհաստանի, Հունգարիայի և այլ երկրների ժողովուրդների պատմության համար: 17-րդ դարում Կաֆֆայում Յաշի հայկական եկեղեցու համար գրված մի Հայոմավուրքում կա ուսու իշխաններ Բորիսի և Գլերի վարքագրությունը, որը որոշ տարրերություն ունի պլրոք: Աւելիքութեակի կողմից հրատարակված նույն վարքագրությունից: 1460 թվականին գրված մի ձեռագրում հիշվում է Մոլդովյայի իշխան Մեծն Շտեֆանը: Իսկ լոյովում գրված մի շարք ձեռագրերում հիշվում են Զիգ-

մունդ 2-րդ Ավգուստը և Զիդմունդ 3-րդ լեհական թագավորները: Մի շաբք ձեռագրերում հիշվում են ուռմինական քաղաքները հայկական ձևով. օրինակ. Աս կամ Ասպազարի (=Յաշ), Սէչով (=Սուչավա) և այլն:

Ստացված ձեռագրերում կան նաև 17—18-րդ դդ. ավետարաններ, 1632 թ. գրված մի տոնացույց, զանազան մեկնությունների և քարոզների ժողովածուներ, քերականության տետր, ինչպես նաև 19-րդ դարի Աղբիանուղովիս և Աղեքսանդրիա քաղաքների հայերի վիճակագրությունները, ձեռագիր բառարաններ, նամակագրության տետրեր՝ Բուխարեստի հայ առևտրական Կարապետ Անուշի հաշվեմատյանը (1845 թ.), Թամիրաս Կուրածին վերնագրով մի երկասիրություն (ուղղված է Մխիթարյանների գեմայն կապակցությամբ, որ նրանք քննազատել էին Մոսկվայում լույս տեսած «Մուզայք Արարատեան» ժողովածուն), Բուխարեստի հայ ավ. քահանա Հարություն Անդրեասյանի անձնական դիվանը (ինքնակենսագրություն և փաստաթղթերի ժողովածու) և այլն:

Վերոհիշյալ 42 ձեռագրերի հավաքածուն մուծվել է Պետ. Մատենադարանի ձեռագրերի ֆոնդը և մշակման և թարկվելով, ներկայումս մատչելի է գարձել սովորական գիտական լայն հասարակայնությանը:

ՌՈՒՄԵՆԻԱՅԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԶԱՅԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ*

1) Ճաշոց

Երեանի Պետ. Մատենադարան № 9484 (Ք. 1)

Թերթեր՝ 360: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Կարապետ երեց: Վերստին կաղմող՝ Ստեփանոս գողիր Կամենիցցի: Ստացող՝ Առեր տիկին: Ժամանակ՝ 1313, 1331 թթ.: Տեղ՝ Երուսաղեմ:

2. Ճաշոց

Երեան՝ № 9485 (Ք. 3)

Թերթեր՝ 491: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Նիկողայոս եպիսկոպոս: Ծաղկող՝ հավանաբար գրիչը, որին օգնել է նաև Ստեփանոս արեղան: Թղթի կոկող՝ Հակոբ արեղան: Տողերը քաշող՝ Հակոբ երեց: Ստացող՝ Կյուրեղ: Ժամանակ՝ 1459—1460 թթ.: Տեղ՝ Աքքերման:

3. Մաշտոց

Երեան՝ № 9486 (Ք. 4)

Թերթեր՝ 163: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Ներսես քահանա Արճիշեցի: Ժամանակ՝ 1555 թ.: Տեղ՝ Լով (Լովով):

4. Մաշտոց

Երեան, № 9487 (Ք. 5)

Թերթեր՝ 151: Նյութ՝ թուղթ: Գրիչ և տեղ՝ անհայտ: Ստացող՝ Տեղ Անդրեաս: Ժամանակ՝ 1565 թ.:

* Արգես ընդհանուր թվահամար դնում ենք ռումինահայերի կողմից ձեռագրերի վրա վերջերս զետեղված համարները: Ենք բեռում հիշում ենք Երեանի Մատենադարանում սրանց ստացած նոր համարները, իսկ փակադնում զետեղում ենք մեր կողմից 1947 թվականին Բուխարեստում մեր մատենադարանակետության շրջանում կազմած 150 ձեռագրերի ընդարձակ ցուցակի համարները: Այդ ընդարձակ ցուցակի մի մասը ներկայումս գտնվում է Երեանի Պետ. Մատենադարանում:

5. Կանոնագիրը

Երևան, № 9488 (Ք. 6)

Թերթեր՝ 369: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Գրիգոր քահանա: Ժամանակ՝
1621 թ.: Տեղ՝ Կոմենից:

6. Յայմաւորը

Երևան, № 9489 (Ք. 7)

Թերթեր՝ 589: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Մինաս և նրա ուսուցիչը Պար-
սամ դպիր: Ծաղկող և կազմող՝ Նիկողայոս դպիր: Ստացող՝ Կաֆացի Դե-
միրի բաղձանքով գրել է տվել նրա եղբայր՝ Խոճա Հակոբը, որը նվիրել
է Յաշի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն: Ժամանակ՝ Ժէ դար: Տեղ՝ Կաֆա:

7. Շարական

Երևան, № 9490 (Ք. 8)

Թերթեր՝ 369: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ անհայտ: Ժամանակ՝ 1640^o թ.:
Տեղ՝ Կոստանդնուպոլիս:

8. Ճաշոց

Երևան, № 9491 (Ք. 9)

Թերթեր՝ 405: Նյութ՝ մագաղաթ: Գրիչ՝ Փիլիպոս քահանա: Ստացող՝
Տեր Հովհաննես և Տեր Պողոս: Ժամանակ՝ 1667 թ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս:

9. Տօնացոյց և պարզառումար

Երևան, № 9492 (Ք. 10)

Թերթեր՝ 201: Նյութ՝ թուղթ: Ժամանակ՝ 1632 թ.: Գրիչ և տեղ՝ ան-
հայտ:

10. Աւետարան

Երևան, № 9493 (Ք. 11)

Թերթեր՝ 309: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Զաքարիա քահանա: Ստացող՝ Տեր
Հուսիլի: Ժամանակ՝ 1712: Տեղ՝ Մարաշ:

11. Քարոզգիրք Յակոբ Նալեան պատրիարքի

Երևան, № 9494 (Ք. 12)

Էջեր՝ 1—1092: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հակոբ Նալեան
պատրիարք: Ժամանակ՝ 1755—1758 թթ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս:

12. Խորհրդառնություն

Երևան, № 9495 (Ք. 13)

Թերթեր՝ 26: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Գևորգ դպիր: Ստացող՝ Գրիգոր
քահանա: Ժամանակ՝ 1690 թ.: Տեղ՝ Մուշավան:

13. Տօնացոյց

Երևան, № 9496 (Ք. 14)

Թերթեր՝ 132: Նյութ՝ մագաղաթ: Գրիչ՝ անհայտ: Ժամանակ՝ 1660 թ.:

14. Աւետարան

Երեսն, № 9497 (Ք. 15)

Թերթեր՝ 237: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Պողոս: Ստացող՝ Խոճա Անդրեաս և Խոճա Պաղտասար: Ժամանակ՝ 1616 թ.: Տեղ՝ Յաշ:

15. Սէր Աստուծոյ և անտառ նորագոյն մտածմանց

Երեսն, № 9498 (Ք. 16)

Թերթեր՝ 170: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Սերոբե դպիր Պետրոսյան: Ստացող՝ Մատթեոս վարդապետ: Ժամանակ՝ 1810 թ.: Տեղ՝ Խրիսուլպուխ (Սկյուտար):

16. Բժշկարան

Երեսն, № 9499 (Ք. 17)

Թերթեր՝ 147: Նյութ՝ թուղթ: Հեղինակ, գրիչ և տեղ՝ անհայտ, Ժամանակ՝ ԺԹ դար:

17. Բժշկարան

Երեսն, № 9500 (Ք. 18)

Թերթեր՝ 96: Նյութ՝ թուղթ: Հեղինակ, գրիչ և տեղ՝ անհայտ: Ժամանակ՝ ԺԹ դար:

18. Համառօտ պատմութիւն անցիցն...

Երեսն, № 9501 (Ք. 19)

Թերթեր՝ 9: Նյութ՝ թուղթ: Ժամանակ՝ 1799—1800 թթ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս:

19. Մեկնութիւն զանազան և քարոզք

Երեսն, № 9502 (Ք. 20)

Թերթեր՝ 138: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Գեորգ վարդապետ Ֆրանկուլյան — Իզմիրցի (ապա Գևորգ Եպիսկոպոս Եռամբիշցի՝ Բուխարեստի և Մոլդավայի հայերի հոգեուր առաջնորդ): Ժամանակ՝ 1823—1824 թթ.: Տեղ՝ Կ. Պոլիս:

20. Քարոզգիրք

Երեսն, № 9503 (Ք. 40)

Թերթեր՝ 398: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ մասամբ Ստեփաննոս Զուզայեցի: Ստացող՝ մասամբ Մկրտիչ սարկավագ տաթեացի և տիրացու Մկրտիչ: Ժամանակ՝ 1795 թ. և այլն:

21. Գանձարան գիտելեաց

Երեսն, № 9504 (Ք. 44)

Թերթեր՝ 210: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ վարժապետ Մարտիրոս Թեոդորի Զերքեղյան (Մ. Մարգարյան): Ժամանակ՝ 1839—1854 թթ.: Տեղ՝ Ֆոկշան:

22. Քարոզգիրք

Երեսն, № 9505 (Ք. 52)

Էջը՝ 654: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Տեր Մելքոն սարկավագ Մելքոնյան տի-

բացու: Ժամանակ՝ 1774 թ.: Տեղ՝ Հաճընի Ս. Հակոբ Մծբնա հայրապետի մենաստան:

23. Քերականութիւն հայերեն լեզուի

Берлин, № 9506 (Р. 56)

Թերթեր՝ 249: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հովհաննես Ա. Անդրեասյան: Ժամանակ՝ 1867 թ.: Տեղ՝ Կոստանդնուպոլիս:

**24. Հանգուցեալ Կարապետ Անուշի հաջուեմատեանը
(Հայատառ թուրքերեն)**

Երեան, Մատենագարանի արխիվ, Կաթողիկոսական գիլան, թղթապանակ № 68ր. Վավերագիր՝ № 147. Թերթեր՝ 21. Նյութ՝ թուղթ. Գրիչ՝ Կարապետ-Անուշ. Ժամանակ՝ 1845, 1857 թթ.. Տեղ՝ Բուխարեստ:

25. Թամիրաս Կուրածին և յայրաբատյան մուզայից գրկեալ ի քնարէ
Երևան, № 9507 (թ. 67)

Թերթեր՝ 110: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Խաչատռը Գրիգորյան-Սահմակյան: Ժամանակ՝ 1832—1845 թթ.: Տեղ՝ Մոսկվա-Պուքարէսթ (Բուխարէստ):

26. Վիճակագրութիւն հայոց Աղքահնուպուստյ

Երեան, Մատենադարանի արխիվ (թ. 90)

Կաթողիկոսական դիվան, թղթապահնակ ՀՀ 68թ, վավերագիր 148: Թերթեր՝ 56: Նյութ՝ թուղթ: Դրիչ և հեղինակ՝ Ղևոնդ քահանա Փափազյան: Ժամանակ՝ 1881 թ.: Տեղ՝ Աղբիանուղուիս (Էտիռնե):

27. Վիճակագրութիւն հայոց Աղէքսանդրին

Երեսն, Մատենադարանի արխիվ (թ. 91)

Կաթողիկոսական գիվան, թղթապահակ Հ 68ր. Վայերագիր 149: Թերթեր՝ 26: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Դեռնդ քահանա Փափազյան: Ժամանակ՝ 1888 թ.: Տեղ՝ Աղեքսանդրիա:

28. Անձնական թղթաժրար և ինքնակենսագրութիւն Հարութիւն ավ. քահանա Անդրէասեանի

Երեան, Մատենադարանի արխիվ (թ. 108)

Թղթապանակ չե 68ր, վավերադիր՝ չե 150:

Թերթեր՝ 105: Նյութ՝ խուղթ: Գրիչ՝ մեծ մասամբ Հարություն ավ.քահանա Անդրեասյան: Ժամանակ՝ ժթ. դար: Տեղ՝ Բուխարեստ և այլն:

29. Բառզիրք Ֆրանսերէն-հայերէն-բուրբերէն և ֆրանսերէն լեզուի բերականութեան համակառ կանոննեղ

Brahm, № 9508 (P. 115)

Թերթեր՝ 268: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ հավանաբար վարդան վարդապետ Բակարյան: Ժամանակ՝ ԺԹ դար: Տեղ՝ հավանաբար Վիեննա:

30. Աւետարան

bphm, № 9509 (Р. 122)

Թերթեր՝ 329: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ կիրակոս: Կաղմող՝ Առաքել Հնագանդենց: Ստացող՝ թեոփոս փակակալ: Ժամանակ՝ 1265 թ.: Տեղ՝ Մաշկեսրի վանք (Կիլիկիա):

31. Աւետարան

Երեսն, № 9510

Թերթեր՝ 328: Նյութ՝ մագաղաթ: Ծաղկող՝ Սարգիս Պիծակ(“): Ժամանակ՝ ԺԴ դար: Տեղ՝ Կիլիկիա(“):

32. Յայսմաւորք

Երեսն, № 9511 (թ. 124)

Թերթեր՝ 436: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Խըտը և Պողոս դպիր (մէծ մասը): Ստացող՝ Մղղեսի Հովհաննես: Ժամանակ՝ ԺԷ դար:

33. Հարցմունք քաղուածոյ

Երեսն, № 9512

Թերթեր՝ 321: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Հաճի Խըտը Քաղատացի: Ժամանակ՝ 1613—1615 թթ.: Տեղ՝ Լով (Լվով):

34. Կանոնագիրք և դատաստանագիրք Մխիթար Գոշի

Երեսն, № 9513

Թերթեր՝ 500: Նյութ՝ թուղթ: Նոր ստացող՝ Մահղեսի Լուսխաթուն: Ժամանակ՝ ԺԷ դար:

35. Սաղմոս

Երեսն, № 9514

Թերթեր՝ 216: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Սուսէս (Սուսիկ), Ժամանակ՝ ԺԷ դար:

36. Առաջնորդ նամակագրութեան զաղղիերէն և հայերէն

Երեսն № 9515 (թ. 65)

Թերթեր՝ 180: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Վարդան վարդապետ Շոկարյան: Ժամանակ՝ 1867 թ.: Տեղ՝ Վիեննա:

37. Պատմութիւն վասն պղնձէ քաղաքին և այլն

Երեսն, № 9516 (թ. 69)

Թերթեր՝ 20: Նյութ՝ թուղթ: Գրիչ՝ Բարսեղ Խալաշ Մանուկի: Ժամանակ՝ 1831 թ.: Տեղ՝ հավանաբար Սուչավա:

38. Քարոզներ

Կենացը դիմացի պարտաւորութիւնը...

Երեսն, № 9517 (թ. 26)

Թերթեր՝ 61: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Ավագերեց Հովհաննես Գալտեկովյան: Ժամանակ՝ 1819 թ.: Տեղ՝ յԵղսարէթ (Եղիսարեթուղովիս):

39. Քարոզներ

Աստուծոյ չօրսում պատուիրանը ասած ու զրած...

Երևան, № 9518 (Ք. 150)

Էջ՝ 187: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հովհաննես Գապտեպովյան: Ժամանակ՝ 1823 թ.: Տեղ՝ Եղիսաբեթուալովիս:

40. Քարոզներ

Փրկչուն չարչարանքը օխտը քարօղի մէջ. ասիլիմ ու գըրիլիմ...

Երևան, № 9519 (Ք. 28)

Թերթեր՝ 49: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հովհաննես Գապտեպովյան: Ժամանակ՝ 1826 թ.: Տեղ՝ Եղիսաբեթուալովիս:

41. Քարոզներ

Օխտը աղցացութեան քարոզ և մէկ քանի քաղման պատճառաւ ասած պիզաի զուրուցը մը...

Երևան, № 9520 (Ք. 27)

Թերթեր՝ 59: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հովհաննես Գապտեպովյան: Ժամանակ՝ 1827 թ.: Տեղ՝ Եղիսաբեթուալովիս:

42. Քարոզներ

Դաս մը մանարատիկ քաղումն ու զուրուցներ

Երևան, № 9521 (Ք. 28)

Թերթեր՝ 64: Նյութ՝ թուղթ: Գրիչ և հեղինակ՝ Հովհաննես Գապտեպովյան: Ժամանակ՝ 1830 թ.: Տեղ՝ Եղիսաբեթուալովիս: